ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

«Յունիստրիմ» համակարգի միջոցով դեպի «ՎՏԲ-Հայաստան Բանկ» ՓԲԸ Դրամական փոխանցումներ հեռախոսահամարի միջոցով

Ընդհանուր պայմաններ

Փոխանցող	«Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգից օգտվող ֆիզիկական անձ	
Ստացող	«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ ֆիզիկական անձ հաճախորդ	
Բանկ	«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ	
Փոխանցման արժույթ	ՌԴ ռուբլի	
Ստացման արժույթ	ՀՀ դրամ	
Փոխանցման եղանակ	«Денежные переводы Юнистрим» հավելված (կամ այլ հարթակ «Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի միջոցով ծառայության մատուցման շրջանակներում՝ https://unistream.ru/transfers/corridors/armenia/?utm_-source=google.com&utm_medium=organic&utm_campaign=google.com&utm_referrer=google.com)	
Փոխանցման համար անհրաժեշտ տեղեկատվություն	«ՎՏԲ - Հայաստան Բանկ» ՓԲԸ –ում Ստացողի գրանցված բջջային հեռախոսահամար	
Ստացման եղանակ	1. Ստացողի՝ Բանկում գործող ՀՀ դրամով քարտային/բանկային հաշիվ, 2. Մինչև գումարի հաշվեգրումը Ստացողի քարտային/բանկային հաշվին կատարվում է ՌԴ ռուբլու փոխանակում ՀՀ դրամի՝ գործարքի պահին տվյալ ծառայության շրջանակներում սահմանված Բանկում գործող ՌԴ ռուբլու անկանխիկ առքի փոխարժեքով:	
Փոխանցման միջնորդավճար	Համաձայն «Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի կողմից սահմանված սակագների, որոնք հրապարակվում են «Յունիստրիմ» դրամական փոխանցումների համակարգի պաշտոնական ինտերնետային կայքում: https://unistream.ru/transfers/corridors/armenia/?utm_-source=google.com&utm_medium=organic&utm_campaign=google.com&utm_referrer=google.com)	
1 փոխանցման օրական նվազագույն/առավելագույն գումար/ամսական սահմանաչափ միևնույն հեռախոսահամարին	«Денежные переводы Юнистрим» հավելվածի միջոցով	29 ՌԴ ռուբլի/450,000 ՌԴ ռուբլի*
	Юнистрим դրամարկղերում	50 ՌԴ ռուբլի/900,000 ՌԴ ռուբլի
Փոխանցման օրական/ամսական առավելագույն քանակ	3 հատ/10 հատ	
Ծառայության աշխատանքային ռեժիմ	24/7	

Փոխանցման տևողություն	1 րոպե
Սահմանափակումներ	Փոխանցման հաշվեգրումը Ստացողի քարտին/հաշվին Բանկի կողմից մերժվում է, եթե՝ 1. Ստացողը Բանկում ունի գործող միայն Հատուկ հաշիվ/քարտ (այն է՝ Սոցիալական ապահովության հաշիվ/քարտ, Միանվագ դրամական վճարի հաշիվ, Պատվովճարի հաշիվ, Հատուցման հաշիվ/քարտ, Սոց. փաթեթի հաշիվ և ՀՀ Կառավարության այլ ծրագրերով սահմանված հատուկ հաշիվներ), 2. Ստացողը Բանկում չունի ՀՀ դրամով հաշիվ, 3. Ստացողը չի անցել Բանկի ներքին իրավական ակտերով սահմանված ստուգումները, 4. Փոխանցողի կողմից տրամադրված հեռախոսահամարով Բանկում հաճախորդ չի գտնվել կամ գրանցված է մեկից ավել հաճախորդ:
Փոխանցման հաշվեգրման եղանակ	1. եթե Ստացողը Բանկում ունի մեկից ավելի գործող քարտ/բանկային հաշիվ, ապա փոխանցման հաշվեգրման առաջնահերթությունը տրվում է քարտին, 2. մեկից ավելի գործող քարտի/բանկային հաշվի առկայության դեպքում փոխանցման հաշվեգրման առաջնահերթությունը տրվում է ամսաթվով վերջին բացված գործող քարտին/բանկային հաշվին, 3. Ստացողի քարտին վարկային գծի առկայության դեպքում փոխանցումը չի հաշվեգրվում այդ քարտին, բացառությամբ այն դեպքի, երբ Ստացողը չունի հաշիվներ և ունի միայն վարկային գծի առկայությամբ քարտ/եր (վարկային գծի առկայությամբ երկու և ավել քարտերի դեպքում փոխանցումը հաշվեգրվում է համաձայն 2-րդ կետի պայմանի):
Փոխանցման կանխիկացման սակագներ	Ստացողի ՀՀ դրամով քարտին/բանկային հաշվին հաշվեգրված փոխանցումը կանխիկացվում է (կամ կատարվում են այլ գործարքներ) համաձայն տվյալ քարտի/բանկային հաշվի համար գործող սակագների: https://www.vtb.am/, տեղեկատու 87-87
Քաղվածքների, դրանց կրկնօրինակների և այլ տեղեկությունների տրամադրման պայմանները	Համաձայն Ստացողի տվյալ քարտի/բանկային հաշվի համար Բանկում գործող սակագների: https://www.vtb.am/am/accounts-and-payments/bank-account
Փոխանցվող գումարի հաշվեգրում	Գումարը հաշվեգրվում է Ստացողի հաշվին անվճար

* Մինչև 10.000 ԱՄՆ դոլարին համարժեք ՌԴ ռուբլի:

ԴՈՒՔ ԻՐԱՎՈՒՆՔ ՈՒՆԵՔ ՀԱՂՈՐԴԱԿՑՎԵԼ ԲԱՆԿԻ ՀԵՏ ՁԵՐ ՆԱԽԸՆՏՐԱԾ ԵՂԱՆԱԿՈՎ՝ ՓՈՍՏԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՈՎ ԿԱՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ: ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԵՂԱՆԱԿՈՎ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ՍՏԱՑՈՒՄԸ ԱՄԵՆԱՀԱՐՄԱՐԱՎԵՏՆ Է: ԱՅՆ ՀԱՍԱՆԵԼԻ Է 24/7 ՌԵԺԻՄՈՎ, ՁԵՐԾ Է ԹՂԹԱՅԻՆ ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅԱՆ ԿՈՐՍՏԻ ՌԻՍԿԵՐԻՑ ԵՎ ԱՊԱՀՈՎՈՒՄ Է ԳԱՂՏՆԻՈՒԹՅՈՒՆ:

Բանկը՝ «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» ՀՀ օրենքով սահմանված Հաճախորդի պատշաճ ուսումնասիրության նպատակով, կարող է Հաճախորդից «Ճանաչիր քո հաճախորդին» («Know your customer») սկզբունքի հիման վրա պահանջել լրացուցիչ փաստաթղթեր կամ այլ տեղեկություններ, ինչպես նաև բանավոր հաղորդակցման ընթացքում լրացուցիչ հարցեր տալ Հաճախորդին (նման պահանջի առկայության դեպքում):

Օտարերկրյա հաշիվների հարկային համապատասխանության ակտի (Foreign Account Tax Compliance Act (FATCA))» հիման վրա ԱՄՆ-ի հետ կնքած համաձայնագրի համաձայն Բանկը Ձեր՝ ԱՄՆ հարկատու հանդիսանալու հանգամանքը պարզելու համար կարող է իրականացնել լրացուցիչ տեղեկատվության հավաքագրում:

Ավանդը երաշխավորված է Ավանդների հատուցումը երաշխավորող հիմնադրամի կողմից՝ համաձայն «Ֆիզիկական անձանց ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքի:

Ավանդների երաշխավորվող սահմանաչափերը հետևյալն են՝

Ավանդի արժույթային կառուցվածքը	Եթե նույն բանկում ունեք միայն դրամային ավանդ	Եթե նույն բանկում ունեք միայն արտարժույթային ավանդ	Եթե նույն բանկում ունեք և ՀՀ դրամով, և արտարժույթով ավանդ	
			Եթե դրամային ավանդը 7 միլիոն ՀՀ դրամից պակաս է	Եթե դրամային ավանդը 7 միլիոն դրամից ավել է
Ավանդի երաշխավորման առավելագույն չափը	16 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ	7 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է դրամային ավանդն ամբողջությամբ և արտարժույթային ավանդը՝ 7 միլիոն ՀՀ դրամի և հատուցված դրամային ավանդի տարբերության չափով)	16 միլիոն ՀՀ դրամ (երաշխավորվում է միայն դրամային ավանդը)
Նույն բանկում բոլոր դրամային ավանդները համարվում են մեկ ավանդ, բոլոր արտարժույթային ավանդները համարվում են մեկ ավանդ: Համատեղ ավանդը համարվում է առանձին ավանդ՝ պայմանագրով սահմանված մասնաբաժնի չափով:				

Ավանդ են համարվում նաև ֆիզիկական անձանց կողմից Բանկում բացված բոլոր հաշիվներին/քարտերին գտնվող դրամական միջոցները և դրանց վրա հաշվարկված տոկոսագումարները: